ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2001թ.

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

ԵՐԵՎԱՆ-2001

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

Ներքին պետական պարտքը և դրա կառուցվածքի դինամիկան

2001թ-ի առաջին կիսամյակում կատարվեց պետական պարտատոմսերի 45 թողարկում 23,626,838,000 դրամ ընդհանուր ծավալով, որից տեղաբաշխվեց 22,914,611,000 դրամի պարտատոմս: Պահանջարկը թողարկման ծավալը գերազանցեց 2.09 անգամ:

	Թողարկում	Պահանջարկ	Տեղաբաշխում	Պ/Թ
Հունվար	2,500,000,000	5,722,654,000	2,093,000,000	2.29
Փետրվար	4,725,600,000	9,702,769,000	4,725,600,000	2.05
Մարտ	4,100,000,000	7,694,614,000	4,100,000,000	1.88
Ապրիլ	3,900,000,000	7,077,363,000	3,594,773,000	1.81
Մայիս	4,401,238,000	9,980,314,000	4,401,238,000	2.27
Հունիս	4,000,000,000	9,291,029,000	4,000,000,000	2.32
Ընդամենը	23,626,838,000	49,468,743,000	22,914,611,000	2.09

45 թողարկումներից 8-ը պետական միջին ժամկետայնության պարտատոմսերի թողարկում է, իսկ մնացած 37-ը՝ ՊԿՊ-երի:

	Թողարկում	որից միջին ժամկետ. պարտատոմս	ՊԿՊ
Հունվար	6	1	5
Փետրվար	10	2	8
Մարտ	10	2	8
Ապրիլ	7	1	6
Մայիս	7	1	6
Հունիս	5	1	4
I կիսամյակ	45	8	37

I կիսամյակում պետական պարտատոմսերի եկամտաբերությունները տատանվել են 17.5000-28.9700%%-ների սահմաններում, իսկ միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 23.3451%:

	Նվազ. եկամտ. (%)_	Առավ. եկամտ. (%)	Միջ. կշռվ. եկամտ. (%)	Տեղ. միջ. կշռ. օր	Թող. միջ. կշռ. օր
Հունվար	24.5000	28.0000	26.0045	163	171
Փետրվար	21.2829	27.2987	23.1651	205	205
Մարտ	22.0000	28.9000	25.0479	222	222
Ապրիլ	22.2000	28.9700	25.3785	246	254
Մայիս	19.0000	25.0000	21.4225	275	275
Հունիս	17.5000	24.7497	20.7089	313	313
I կիսամյակ	17.5000	28.9700	23.3451	243	244

Պահանջարկի զգալի մասը բաժին է ընկել ՊԿՊ-երի շուկայում գործող 7 գործակալներին՝ 76.13%-ը, կամ թողարկման 159.40%-ը, համապատասխանաբար՝ ՊԿՊ-երի շուկայում գործող 17 դիլերներին բաժին է ընկել պահանջարկի 22,80%-ը և թողարկման՝ 47,75%-ը: ԳՊ-ին բաժին է ընկել պահանջարկի 1.07%-ը կամ թողարկման 2.23%-ը: Տեղաբաշխված ծավալի 73.75%-ը ձեռք են բերել գործակալները, 23.95%-ը՝ դիլերները, 2.30%-ը՝ ԳՊ-ն:

Պետական պարտատոմսերի առաջնային շուկայի հիմնական բնութագրերը 2001թ. Ի կիսամյակ



Շրջանառության մեջ եղած ՊԿՊ-երի կառուցվածքն ըստ թողարկման ժամկետայնության 2001թ. I կիսամյակ



ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկան 2001թ.
առաջին կիսամյակում

2001թ-ի առաջին կիսամյակում ՀՀ պետական արժեթղթերի երկրորդային շուկայի ծավալները 2000թ-ին երկրորդային շուկայում կատարված գործարքների ծավալների համեմատ բավականին ընկավ՝ պայմանավորված այդ ժամանակաշրջանում տոկոսադրույքների հարաբերական կայունությամբ:

2001թ. I կիսամյակի ընթացքում երկրորդային շուկայում կատարված գործարքները ունեն հետևյալ տեսքը՝

- Կատարվել է 690 գործարք, որից՝ ԿԲ-ի կողմից՝ 37 գործարք
- Գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 23,666.4 մլն. դրամ, որից
- Առևտրային բանկերի կողմից 22,321.6 մլն. (ՊԿՊ՝ 19,461.2 մլն., ՄԺՊ՝ 2,860.4 մլն.) դրամ
- ԿԲ-ի կողմից 1,344.9 մլն. (ՊԿՊ՝ 317.0 մլն., ՄԺՊ՝ 1.027.9) դրամ
- Ընդամենը ՊԿՊ՝ 19,778.2 մլն. դրամ
- Ընդամենը ՄԺՊ՝ 3,888.2 մլն. դրամ
- Միջին կշռված եկամտաբերությունը՝ 22.7629%
- Միջին կշռված ժամկետը՝ 179 օր
- Միջին օրական ծավալը՝ 179.7 մլն. դրամ
- Գործարքների միջին օրական քանակը՝ 5
- ԿԲ-ի կողմից կատարված գործարքների միջին կշռված եկամտաբերությունը՝ 22.0966%
- ըստ ժամկետայնության գործարքները ունեն հետևյալ տեսքը.



Երկրորդային շուկայում կատարված գործառնությունները 2001թ. I կիսամյակ				
Ամիս	**Գործ. ծավալը (դրամ)**	**Միջ. օրակ. ծավալը (դրամ)**	**Գործ. միջ. քանակ**	**Միջին կշռվ. եկամտ (%)**
Հուն-01	2,531,763,000	120,560,143	4	25.2106
Փետ-01	3,875,257,000	193,762,850	6	22.6170
Մարտ-01	6,757,836,890	321,801,757	7	24.2924
Ապր-01	4,205,573,000	210,278,650	6	23.3189
Մայիս-01	4,484,810,000	224,240,500	5	20.3279
Հուն-01	2,185,676,438	109,283,822	4	19.7213



Կատարված գործարքների մեջ ՊԿՊ-երի և ՄԺՊ-երի տեսակարար կշիռը հետևյալն է.

ՊԿՊ-երի և ՄԺՊ-երի տեսակարար կշիռը



ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

2001թ. 1-ին կիսամյակում ընթացքում Գանձապետական պահառու համակարգը 36 աճուրդից մասնակցել է 36-ին: Ներդրման ծավալը կազմել է 527.080.000 դրամ, մարվել է 301.766.000 դրամի պարտատոմս:

ԳՊ-ով ներդրումները և մարումները 2001թ. առաջին կիսամյակում



Ընդամենը 2001թ. հունիսի 29-ի դրությամբ շրջանառության մեջ է եղել 525.447.000 դրամի պարտատոմս: Դեպո հաշիվների քանակը կազմել է 403:

ԳՊ-ով ձեռք բերված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը

2001թ. 1-ին կիսամյակում



Ներդրման ծավալը 2000թ-ի 1-ին կիսամյակի նկատմամբ աճել է 164.28%-ով, 2000թ-ի 2-րդ կիսամյակի նկատմամբ աճել է 56.42%-ով, ԳՊ-ով ձեռք բերված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը նախորդ տարվա 1-ին կիսամյակի նկատմամբ աճել է 406.21%-ով, իսկ 2-րդ կիսամյակի նկատմամբ աճել է 91.18%-ով:

Դեֆիցիտի ֆինանսավորումը 2000թ-ի 1-ին կիսամյակի նկատմամբ աճել է 663.86%-ով, 2000թ. 2-րդ կիսամյակի նկատմամբ նվազել է 6.82%-ով:

2001թ. 1-ին կիսամյակ	**տեղաբաշխում**	**մարում**	**միջին կշռված եկամտաբերություն ների միջինը**	**դեֆիցիտի ֆինանսավորում**
I եռամսյակ	315.646.000	129.516.000	24.18%	167.512.462
II եռամսյակ	211.434.000	172.250.000	22.11%	33.534.983
Ընդամենը	527.080.000	301.766.000		201.047.445

2000թ-ի 2-րդ կիսամյակում կայացած ԳՊ մասնակցությամբ աճուրդների միջին կշռված եկամտաբերությունների միջինը կազմել է 24.37%, 2001թ. 1-ին կիսամյակում՝ 23.32%:

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

ՀՀ արտաքին պարտքը (ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ, և նրանց կողմից տրամադրված արտաքին երաշխիքներ) 2001թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 857.2 մլն. ԱՄՆ դոլար, որից.

- 662.5 մլն. ԱՄՆ դոլարը ՀՀ Կառավարության արտաքին պարտավորությունների գծով,
- 176.7 մլն. ԱՄՆ դոլարը ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին վարկային պարտավորությունների գծով,
- 18 մլն. ԱՄՆ դոլարը ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով:

Արտաքին պարտքի կառուցվածքն ըստ վարկառուների



2001թ. առաջին կիսամյակի ընթացքում ստորագրվել է երեք նոր վարկային պայմանագրեր.

- Գյուղատնտեսական ծառայությունների ծրագիր (վարկատու՝ Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ, վարկառու՝ ՀՀ Կառավարություն): Վարկի գումարը 12.35 մլն. SDR:
- Կառուցվածքային բարեփոխումների չորրորդ (SAC – 4) վարկային ծրագիր (վարկատու՝ Միջազգային Զարգացման Գործակալություն, վարկառու՝ ՀՀ Կառավարություն): Վարկի գումարը 38.4 մլն. SDR:
- Աղքատության նվազեցման և տնտեսական աճի ծրագիր (վարկատու՝ Արժույթի Միջազգային Հիմնադրամ, վարկառու՝ ՀՀ Կենտրոնական բանկ): Վարկի գումարը 69 մլն. SDR:

Նշված երեք վարկերն էլ տրամադրվել են արտոնյալ պայմաններով:

2001թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պարտավորությունների գծով ստացվել է 53 մլն. ԱՄՆ դոլար, որից ՀՀ Կառավարության պարտավորությունների գծով 40.4 մլն. ԱՄՆ դոլար և 12.6 մլն. ԱՄՆ դոլար ՀՀ Կենտրոնական բանկի պարտավորությունների գծով: Հարկ է նշել, որ 2001թ. առաջին կիսամյակում 1999թ. փետրվարի 18-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի անդրծովյան տնտեսական համագործակցության հիմնադրամի միջև ստորագրված «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգերի ծրագիր» վարկային համաձայնագրի շրջանակներում կատարվել է առաջին օգտագործումը:

2001թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով սպասարկումը կազմել է 34.21 մլն. ԱՄՆ դոլար, որից հիմնական գումարի մարման գծով 21.93 մլն. ԱՄՆ դոլար և տոկոսավճարի գծով 12.28 մլն. ԱՄՆ դոլար:

2001թ. առաջին կիսամյակում ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով սպասարկումը (առանց երաշխիքների)



2001թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով վճարվել է.

1. 21.93 մլն. ԱՄՆ դոլար որպես հիմնական գումարի մարում, որից.
   - 18.33 մլն. ԱՄՆ դոլարը ՀՀ Կառավարության արտաքին պարտավորությունների գծով՝ այդ թվում 9.21 մլն. ԱՄՆ դոլար ռուսական վարկերի 2000թ. վճարման ենթակա հիմնական գումարի մարման գծով:
   - 3.6 մլն. ԱՄՆ դոլարը՝ ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով:
2. 12.28 մլն. ԱՄՆ դոլար որպես տոկոսավճար, որից.
   - 11.11 մլն. ԱՄՆ դոլարը ՀՀ Կառավարության արտաքին պարտավորությունների գծով՝ այդ թվում 3.83 մլն. ԱՄՆ դոլար ռուսական վարկերի 2000թ. ժամկետանց վճարումների գծով:
   - 1.17 մլն. ԱՄՆ դոլարը՝ ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով:

2001թ. առաջին կիսամյակում ՀՀ Կառավարության արտաքին պարտավորությունների գծով սպասարկումը (առանց երաշխիքների)



2001թ. առաջին կիսամյակում ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով սպասարկումը (առանց երաշխիքների)



Ռուսաստանի կողմից տրամադրված վարկերի վերաձևակերպման շուրջ 2001թ. առաջին կիսամյակի ընթացքում շարունակվել են բանակցությունները:

2001թ. առաջին կիսամյակի ընթացքում բանակցություններ են վարվել նաև Վրաստանի հետ՝ 1996թ. հունիսի 5-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Վրաստանի կառավարությանը տրամադրված վարկերի վերաձևակերպման մասին» պայմանագրով Վրաստանին տրամադրված վարկի վերաձևակերպման շուրջ: Համաձայն նշված պանագրի Վրաստանը Հայաստանին 2001թ. պետք է վճարեր 4.673 մլն. ԱՄՆ դոլար, որից 2.353 մլն. ԱՄՆ դոլարը (1.959 մլն. ԱՄՆ դոլարը որպես հիմնական գումարի մարում և 0.394 մլն. ԱՄՆ դոլարը որպես տոկոսավճար) 2001թ. առաջին կիսամյակի ընթացքում: Սակայն, Վրաստանը դիմել է Փարիզյան ակումբ իր արտաքին վարկերը վերաձևակերպելու խնդրանքով և ստացել է վերջինիս համաձայնությունը: Վարկի պայմանների և ժամկետների շուրջ բանակցությունները 2001թ. առաջին կիսամյակի ընթացքում չեն ավարտվել:

Այսպիսով 2000թ. վերջի համեմատ ՀՀ արտաքին պարտքը (առանց երաշխիքների) զուտ արտահայտությամբ աճել է 31.07 մլն. ԱՄՆ դոլարով: Սակայն, հաշվի առնելով, որ ՀՀ արտաքին պարտքի զամբյուղի մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն SDR-ով և EURO-ով տրամադրված վարկերը և 2000թ. ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրանց կուրսերը զգալի նվազել են, ՀՀ արտաքին պարտքի ծավալը (առանց երաշխիքների) 2000թ. առաջին կիսամյակի ընթացքում 2000թ. վերջի նկատմամբ նկատմամբ ընդհանուր առմամբ չի աճել՝ ՀՀ արտաքին պարտքի ծավալը (առանց երաշխիքների) 2000թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 840.4 մլն. ԱՄՆ դոլար և 2001թ. հունիսի 30-ի դրությամբ 839.2 մլն. ԱՄՆ դոլար:

Հարկ է նշել, որ 2001թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ ՀՀ արտաքին պարտքի զամբյուղի 73.1%-ը կազմում են SDR-ով, EURO-ով և Ճապոնական իենով տրամադրված վարկերը.

ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքն ըստ տրամադրման արժույթի



ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի կողմից տրամադրված արտաքին երաշխիքները կազմում են Հայաստանի արտաքին պարտքի միայն 2%-ը և նվազման միտում ունեն:

2001թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ ՀՀ արտաքին պարտավորությունների (առանց երաշխիքների) 78%-ը կազմում են բազմակողմ վարկատուներից ստացված վարկային միջոցները՝ որից 57%-ը ՀՀ Կառավարության կողմից ստանձնած վարկային պարտավորությունների գծով և

21%-ը Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) կողմից ՀՀ Կենտրոնական բանկին տրամադրած վարկերի գծով, 22%-ը կազմում են երկկողմ վարկատուներից ստացված վարկերը.

ՀՀ արտաքին պարտքի կառուցվածն ըստ դոնորների



ՀՀ Կառավարության և ԿԲ-ի արտաքին պարտավորությունների գծով բազմակողմ դոնորների կառուցվածքը 2001թ. I կիսամյակում



ՀՀ Կառավարության և ԿԲ-ի արտաքին պարտավորությունների գծով երկկողմ դոնորների կառուցվածքը 2001թ. I կիսամյակում



2001թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ ընդհանուր առմամբ արտոնյալ վարկերը ՀՀ արտաքին պարտքի մեջ կազմում են 77%՝ 2000թ. վերջին այն 74% էր:

ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքն ըստ արտոնյալության